Էլեկտրոնային ուսուցման հարթակ

MOODLE

Ուղեցույց

Հարցաշար (թեստ, Quiz) կազմելու և օգտագործելու համար

Moodle Quiz

Moodle էլ. ուսուցման հարթակում ավտոմատ գնահատման նպատակով ստեղծված է **Հարցերի բանկ** (հարց ու պատասխանի) գործիքը, որը գտնվում է Կառավարում դաշտի **դասընթացի վարչակազմ** մենյուի մեջ:

Քայլ 1: Նախքան հարցերի բանկում հարց ստեղծելը անհրաժեշտ է մուտք գործել այն դասընթացի էջ, որի համար ստեղծվելու են հարցերը:



Քայլ 2: Բացված նոր էջում պետք է ընտրել **ՍՏԵՂԾԵԼ ՆՈՐ ՀԱՐՑ** դաշտը, ինչպես պատկերված է նկարում:



Քայլ 3: Նոր բացված պատուհանում պետք է ընտրել հարցի տեսակը՝

- հաշվարկային,
- հաշվարկային ընտրովի պատասխանով,
- պարզ հաշվարկային,
- տեքստային ինֆորմացիա,
- հարց որի պատասխանը նկար է,
- շարադրություն,
- պատահական կարճ հարց և պատասխանի համապատասխանեցում
- ընտրել բացթողնված բառը,
- թվային պատասխան և այլն:



Քայլ 4: Տարբերակներից մեկն ընտրելուց հետո բացվում է նոր էջ, որտեղ պետք է ստեղծել հարցը, անհրաժեշտության դեպքում նաև պատասխանները:



Օրինակ՝ ընտրենք Բազմակի ընտրություն տարբերակը, այսինքն հարց՝ մի քանի տարբերակներով:

Քայլ 5: Վերոնշյալ տարբերակի ընտրության դեպքում բացվելու է ներքոնշյալ պատուհանը, որտեղ պետք է լրացնել հարցերն իրենց տարբերակներով.

1. Լրացնել հարցի վերնագիրը (Կետ 1)
2. Լրացնել բուն հարցը (Կետ 2)
3. Լրացնել պատասխանների տարբերակները (Կետ 3)
4. Գնահատական ցուցակը բացելով (Կետ 4) բացվելու է ցուցակի պատուհան (Կետ 5), որտեղ անհրաժեշտ է ընտրել.

յուրաքանչյուր տարբերակի համար ընտրում ենք գնահատականի որոշակի տոկոս, կամ եթե մի պատասխանն է ճիշտ՝ նշում 100%-ը, մնացածը թողնելով ոչ:



Քայլ 6: Դաշտերը լրացնելուց հետո սեղմում ենք **ՊԱՀՊԱՆԵԼ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ** կոճակը:



Փոփոխությունները պահպանելուց հետո բացվելու է ներքոնշյալ պատուհանը, որը մեզ թույլ կտա.

- **Ստեղծել նոր հարց**
- **Տեսնել ստեղծված հարցերը**

կոճակը նախատեսված է հարցի նախադիտման

X ***կոճակը նախատեսված է հարցի ջնջման համար*** (Տես կետ 6)



Ստեղծել նոր հարց կոճակը չի պարտադրում, որ հարցը լինի նույն ձևաչափով. մյուս հարցի պարագայում կարող եք ընտրել օր. Essay տարբերակը, այսինքն ուսանողը պետք է հարցին տա արձակ պատասխան: Բացվում է նոր էջ, որտեղ պետք է հերթով բացել և լրացնել նկարում պատկերված դաշտերը:



Ավարտելուց հետո պետք է սեղմել **ՊԱՀՊԱՆԵԼ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ** կոճակը: Ցանկության կամ անհրաժեշտության դեպքում կարող եք շարունակել խմբագրել:

Հարցերի բանկը պարտրաստելուց հետո պետք է արդեն ստեղծված հարցերը թեստերի միջոցով տրամադրել ուսանողներին:

Քայլ 7: Անցնում ենք դասընթացի խմբագրման էջ և սեղմում **ԱՎԵԼԱՑՆԵԼ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՄ ՌԵՍՈՒՐՍԸ** կոճակը



Քայլ 8: Բացված էջից ընտրում ենք **Հարցաշար** տարբերակը



Քայլ 9: Լրացնում ենք **ԱՆՎԱՆՈՒՄ** դաշտը, անհրաժեշտության դեպքում փոփոխում մյուս պարամետրերը:



Պատկերված գործիքակազմը թույլ է տալիս սահմանել հարցաշարի/թեստի հասանելիության ժամկետ, գնահատման համակարգ և այլ հնարավորություններ:



Քայլ 10: Թեստը պահպանելուց հետո ունենալու ենք հետևյալ պատկերը

Քայլ 11: Անհրաժեշտ է սեղմել ստեղծված թեստի վրա և բացել այն. բացելուց հետո կտեսնեք, որ այն դեռ դատարկ է, այսինքն հիմա նոր պետք է կազմել հիմնական հարցերը: Դրա համար սեղմում ենք **ԽՄԲԱԳՐԵԼ ՀԱՐՑԱՇԱՐԸ** կոճակը .



Քայլ 12: Բացվող պատուհանում առկա է **ADD** կոճակ, որը և մեզ թույլ կտա

- ավելացնել նոր հարց
- հարցերը ներմուծել **ՀԱՐՑԵՐԻ ԲԱՆԿԻՑ**



Ընդ որում 1-ին տարբերակը **ԱՎԵԼԱՑՆԵԼ ՆՈՐ ՀԱՐՑ** ընտրելու դեպքում վերադառնում ենք **Քայլ 3.** , այսինքն բացվում է նույն պատուհանը, որից հետո քայլերի հաջորդականությունը նույնն է:

Քայլ 13: Հարցեր կազմելուց կամ Հարցերի բանկից ընտրելուց հետո էջում երևում են հարցերը.



Կետ 7-ի խոշորացույց կոճակը թույլ է տալիս նախադիտել հարցը.



Բոլոր հարցերը կազմելուց հետո սեղմում ենք **ՊԱՀՊԱՆԵԼ** և վերադառնում դասընթացի հիմնական էջ: